

Գ.

ԵՐԳԵՐ

— ❧ ❧ —

ԳՈՎԱՍՍԱՆԱԿԱՆ

ԵՒ

ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՄՈԿԱՑ ՄԻՐՋԵՆ

Մոկաց բարբառով *).

Օրն էր ուրբաթ լուսու շա- բաթ, Թղթիկմ բիրըն ձգիրու խիտ. Առըն, բիրին Մոկաց շուկէն. Տարան, տուըն ձեռ, Մոկաց Միր- զին:	Մոկաց միրզէն առըց, կարդաց քեաղցրիկ լեզուէն, Էրաւ մաղդէն, կախից ուր մրզինք, Իմ սափիրէն, չուր ձգիրէն՝ Խէր շտեսներ Կօլտա խօճէն 1). Քաժն էր Կօլտա, բոչամ էրկէն. Քեչեցէք գիւս բօզ բատըլէն.
--	--

*) Երգած է Մոկաց բարբառով Ջափիկ Խէպոյեան:

1) Միրզէն Մոկաց տէրն էր եւ հայ, Կօլտա Խոնէն եւս հայ յառեւտական էր, սիրահարուած էր Միրզի հարսի վերայ, իւր նպատակին հասնելու նամար շին-
ծու նամակ կը գրէ. զՄիրզէն խափելով ձգիրէ կը տանէ, նամապարհին դաճակի
մի երեսը կը բուճաւորէ. ապա ձմեռուկ մի երկու տէրս կանէ. դաճակի բուճաւոր
կողմի տէրը կըսայ Միրզին, որ կուտէ, կը մեռնի:

Վերայ դրէք զին սասաւէն.
Իմ սափաւէն չուր ձօխրէն,
Քեշեցին դիւս բօզ պատըլէն,
Վերայ դրըն զին սասաւէն,
Էլլաւ, խէծաւ Մոկաց Միրզէն.
Խեք չտեսներ կօլոտ Խօճէն.
—Մնէք բարով, ես տերթամ չուր
ձօխրէն:

Գեացընք, խասանք չուր Զամպա-
րէն,

Խաթունքտիր էլան, Թափան փան-
ջարէն,

Խեք չտեսներ կօլոտ Խօճէն,
Խաղար ափսոս Մոկաց Միրզէն՝
Չկէր քիւ նման հընկի դիւնէն.
Գեացընք, խասանք չուր ձօխրէն.
Խաթունքտիր Թափան Մոկաց Միր-
զի քամաւէն,

Խեք չտեսներ կօլոտ Խօճէն.
Բաժնէր կօլոտ, բոչամ էրկէն.
Խաղար ափսոս Մոկաց Միրզէն
Չրկէր քիւ նման հընկի դիւնէն:
Վանչից Մոկաց Միրզին կօլոտ Խօ-
ճէն.

Առից, տարաւ յիւր յօսէն.
Առից փառէն, էջաւ շուկէն.
Առից բօզ բաշըլէն,
Դանակ դեղից մէկն իրեսէն,
Կաժըց բօզ բաշիլէն,
Կաժմ էն կերաւ, մէկ Մոկաց Միր-
զէն.

Խեք չը տեսներ կօլոտ Խօճէն,
Խաղար ափսոս Մոկաց Միրզէն,
Չրկէր քեօ նման հընկի դիւնէն.
Թափաւ դեղին ջուր, սըպտակ
լըբէն,

Թափաւ մազիր կարմիր իրեսէն.
Թափաւ պեղիր նագուկ պուկէն՝
Թափաւ լամէն 1), կախուաւ չանէն,
Խեք չտեսներ կօլոտ Խօճէն,
Բաժնէր կօլոտ, բոչամ էրկէն,
Խաղար ափսոս Մոկաց Միրզէն,
Չրկէր քիւ նման հընկի դիւնէն:
Էսաց.—Քեշեցէք դիւս բօզ բաղը-
լէն.

Վերայ դրէք զին սասաւէն.
Էլլը, խեծնէ Մոկաց Միրզէն,
Խեք չը տեսներ կօլոտ Խօճէն,
Չրկէր քիւ նման հընկի դիւնէն.
Քեշեցին դիւս ... (նոյն վերը).
Իկինք, խասանք չիւր Խնկու դարէն՝
Բարով խանք չիւր Խնկու դարէն.
Տեսանք ժուռժուռ նաչմ ներքուց
բիրըն,

Խեք չը տեսներ կօլոտ Խօճէն,
Խաղար ափսոս Մոկաց Միրզէն,
Չրկէր քիւ նման հընկի դիւնէն.
Էկընք, խասանք չիւր Բռնաչէն 2),
Բարով խասանք չիւր Բռնաչէն.
Կուժ կթխէն կախած նաչէն՝

Պուտ պուտ էրուն կաթէր գետըն,
Խեք չը տեսներ կօլոտ Խօճէն
Խաղար ափսոս Մոկաց Միրզէն:
Խապար տարէք իմ բերդի Խաթու-
նին,

Ասէք, Թըլս դեայ վէար ուր քախ-
սին.

Խանէ քաժէն, խաքնի զխին.
Էլ նա չի, ան բերդի Խաթուն.
(Մինչև էկաւ Մալաքեռի, մեռաւ,
սաղ չխասաւ տուն):

1) Ծնոտի մանրը. կաշին.

2) Բռնաչէն Մոկաց հին քաղաքն էր հարաւային կողմ. մեծ գետ
մի մօտէն կանցնի:

Թիմուրայ Կիսանեց զիւղի բարբառով *):

Սա վիրու ոչխար մէջ ասլան քեարին՝
Թուանքով զարկին բրինձար հարին,
Խաղրիկմ օրօղկէք իմ նազլի հարին.
Առնի գեղ դարման, գայ վեր ուր հարին.
Դաստէմ ռեհանով Խարբըս կը գնես,
Ալմաստ խանձրով հարէս (վէրքս), կը քաւէս:
Արե հար, արե. խռով մի մնայ
Խօր տուս աստուորի, քե ձի չի մնայ:

Բալում խաք էկաւ անու վերաւոր,
Վզիկ յէրկէն՝ սուտիկ սկաւոր.
Թալեմ բե չարեհն, էրթամ խետ ինոր,
էն իմ դարդն էր գիցէ, ես՝ ինոր:
Արե հար, արե, արե ջան, արե, խռով մի մնայ,
Խօր տուս աստուոր ի, քե ձի չի մնայ:

Բաղչէմ եմ զրեք, քաւէն ուր մօտէն՝
Աստուած ձի չխուր, ռուր հմ ուր մօտէն:
Արե հար արե, արե ջան արե. Ելն:

Բաղչէմ եմ զրէ վարդ խաղար քաւուր,
Մէջ էն վարդերաց իմ վարդն էր քեհաւուր,
էն շահի բլբուլ իջաւ իմ վարդի խուր՝
Արե հար, արե, խռով մի մնայ. Ելն:

Բաղչէմ եմ զրե, սասա սխտոր ի,
Մեռնեմ իմ հարոյ առաւ պխտոր ի.
Բաղչէմ եմ զրե սասա ասմայի,
Մեռնեմ իմ աղբօր՝ կապած եագմա ի:
Բաղչէմ եմ զրե սասա բիբար ի,
Մեռնեմ իմ աղբօր, քաղա նուպար ի:
Արե հար, արե, խռով մի մնայ:

Խօր տուս աստուորի, քե, ձի չի մնայ.
Իմ խէրանց յէզին կամարով աղբուր,
էրթամ պագեմ, Թալեմ խաչ խամբուր:
Արե, հար, արե, խռով մի մնայ. Ելն:

Օլիւկմ եմ տնկե խետ տուրի ափան,
Իջաւ, բանձրցաւ խետ արեգական.
Նրա՝ բայրիկ կերայ, նրա՝ տկիկ պառկայ.
Արի, ախ. ախ ձի սիրեց,

*) Ասած է Խոռոս Սարգսիանը:

Ասի.—քարկի. ֆալաֆ ձի կոռեց:
Արե, եար, արե, խռով մի մնայ.
Խօր տուս աստուոր ի. ձի, քե չի մնայ,
Երկին ի ամպեր, գիւղայ մարմար ձուն,
Գիւղայ, թափի վեր մալուլ մարդուն.
Մէյ ես ի մալուլ, չէ աշխար բիթուն:

Արե եար արե, արե ջան արե,

Խռով մի մնայ.

Խօր տուս աստուորի,

Ձի քե չի մնայ:

*
* *

Վաճայ եւ Վաղարշապատի խառն քարբառով.

Մարման կեաքոււ նման 1)

Ձէնիկդ կուգէր սարէն անուշ,

Ձէնիկդ կուգէր լեռնէն անուշ.

Անուշ-անուշ խոտ կէր քեօ ծոց,

Կրակն ինկաւ, սիրտս էլաւ բեօց:

Եղնիկ, քեօ դարսէն, քեօ դարսէն.

Դիւ կարեցիր սրտիս փարսէն.

Խօրճա, քեօ դարսէն, քեօ դարսէն.

Դիւ կարեցիր սրտիս փարսէն.

Անգին քեօ դարսէն, քեօ դարսէն,

Դիւ կարեցիր սրտիս փարսէն:

Կանչեմ գիշեր, կանչեմ ցերեկ,

Էս օր աղէկ էր քան զերեկ,

Իմ սրտի ուզած ելարն ձիկ բիրէք.

Բիրէք, տեսնեմ, էլմ տարէք:

Աղջիկ, էս ինչ բան էլերէս,

Ծաղկեալ բուրաստան դարձերէս.

Արշալուսին գիւս կիւգեաս.

Աստղ առաւօտեան դարձերէս:

Իրաւն ասած, ծանր կանես.

Թէ սաղ սրտով ձիկ կը խաւնես.

4) Սոյն երգերն երգած է Կափանցեանց անէն Եղիսաբէդ անուն մի պառաւ. այս Եղիսաբէդ ինքը ընիկ Աւանցի է եւ երկար միջոց Վան եւ քսան տարիէն աւելի տեղս (Վաղարշապատ) հաստատուած լինելուն հայրենական հնչունները փոխած է:

Մէ պաշիկմ կուգեմ.
 Վախենամ պուճուճակդի մաժես:
 Տարեր իս էրեսիս հայեն.
 Կառեր իս սրտիս փառօքն.
 Թուղթմ գրեմ Կիրճի կալամ.
 Որ պտտեմ աշխար - ալամ.
 Քե կորոխկեմ դուա - սալամ:
 Արեն առեց ալ ճարքն.
 Հերթք, ձիկ կանես դարնճի
 Արեն առեց ամառ - կամար.
 Քե պախերեմ ջանիս խամար:
 Զուր կուգէր վերին սարէն.
 Կուգէր, թափէր մարմար քարէն.
 Ետսի դարձեր ուր կրարէն.
 Ատարծուց առնէր ուր պալէն:
 Սարերն իլին ասեղ էր.
 Իմ ետք նոր խասեր էր.
 Սարերն իլին աւազ էր.
 Իմ ետք փաթին գաւազ էր:
 Զաղչի դռներ տաշած էր.
 Ետրիկ սրտիս խասած էր.
 Զաղչի առուն ջուր կուգէր.
 Աղջիկ լաճուն դուր կուգէր:
 Յեկարին պէրի գալս ի.
 Կարմիր խնձոր ծառէն կախ ի.
 Աչքերս կուլայ, սիրտս ուրախ ի:
 Գեղի միջին սրտին նուշ ի.
 Կարիպուլթեն աչիչ փուշ ի:
 Կարիպ եմ խեռ կարիպներաց.
 Էլայ, իրիչկեցի քոցի ճաղերաց.
 Իմ կարիպի սուֆաթն էրեաց
 Իմ տղայ ումիկ քիւլ արաց.
 Ուրախ սրտիկս արուն արաց:
 Խարաւ քամին, դիւ գնձ, արե.
 Կարիպիս տես, խաբրիկմ առ, արե.
 Արե ետք, արե, խառով մի կենար.
 Սուտ ու փուտ դիւնի մալ մարդու չմար:
 Երեկ յեկարին, վեր պերու քարին.
 Զրինդով զարկին բրինդար ետրին.
 Խապրիկ տարէք իմ ճազու ետրին.

Առնէ դեղ-դարման, գայ իմ եարին:

Քամբախ Բուլանխ, փլէր Իւսկիւտար.

Իմ կարիպ չէրթէր, ձիկ անէր տեպէտար.

Արի, եա՛ր, արե, խռով մի մնար,

Աստուորի մալ ձիկ ու քե չմնար:

Յուռկմ եմ տնկե խնտ առուի ափին.

Էլաւ ճեօղ քեց խնտ արեգակին.

Պաղչեմ եմ տնկե վարդ հազար թավուր.

Ամեն վարդի մէջ իմ վարդն է քեաճուր.

Շահ բլբուլ իջաւ վեր իմ վարդին խուր.

Աղջի, դիւ քէլե փողանիդ ի.

Մէջ քեօ էրկու ծիծ քնելու տեղ ի.

Արի. քե պաղնեմ, անխալել մեղր ի.

Էն մեղրն օր խալի, իմ խոցիս դեղ ի.

Էրեկ խմեր իս. էս օր խումար իս.

Անդին մարգրիտ խլտ օսկուն շարիս.

Անթել անասեղ վըր խոգիւս կարիս:

Գնացիր էգին, խաղող կը քաղես.

Շամամ ծծերով չաքար կը մաղես.

Ալմաստ խանջալով սրտիկս կը տաղես:

Խաւքիկ վեր ծովուն, անուն էր արօր.

Վգիկն էր էրկէն, սեաւօր.

Գլուխ կարմրւոր:

Կապեմ պենջարեն, էլնեմ վեր ծովուն.

Էն դեօր կերթայ. ես էլ խլտ ինոր.

Էն իմ դարս գինայ, կեօ ես էլ ինոր:

Աղջի, արե նազերով, քեալաօ ծամերով.

Մամերդ ստրկեմ գեօհար պաղերով:

Պաղչեմ տնկե պիթուն քեաճուր վարդ.

Էլայ քաղելու չելաւ ձի կոմաք.

Պաղչեմ տնկեցի պիթուն ղռնդաթ.

Աստուած մինակ գիտի՛ր քեաղցիս դարս:

Կեաքեաւ բուն է դրեր վիր էնա սարին,

Կեաքեաւն է կերեր

* *

*

Վաճայ բարբառով.

Մանչեմ.— եա՛ր, արե. սարեր լացուցեմ.

Կանչեմ ջան, արե, քարեր լացուցեմ.

Շատ կարիք կուրպէք ճամբիւից դարձուցեմ.
Որ ձեռնէս դայ, զարպապ խաղուցեմ
Աղջի, դիւ քէլիս, ես կանիմ ոտին.

Էրկուս գիրկ ու ծոց մէջ փալախոտին.

Արե՛, եար, արե՛, խռով մի մնար,

Աստուտրի մալ ձի ու քե չմնար:

Խոյա սելկելի, Պէտաաայ շամամ.

Պէ՛ մուրաս կենամ, Թէ քենէ դառնամ

Գիշեր ասին ճեօ եար էկաւ.

Ցերեկ ասին ճեօ եար էկաւ.

Էկաւ, էկաւ, մեր տուն չէկաւ.

Գիշեր ջուր լուս ձիկ քուն չէկաւ.

Աշխար ասին ճեօ եար ծուռ ի.

Թաղով ասին ճեօ եար ծուռ ի.

Մէջ իմ սրտին լալ ու դուր ի.

Էկաւ էկաւ ...

Ես աղբուր եմ, դիւ ջուր էս.

Դառնամ գինի դիւն էլ խմես,

Վախնամ խմես, ծախս ինես:

Ծօ, տղա՛, տղա՛, դիւ ալ կապող.

Խերիք կան դեաս մեր պատով.

Մեր խօրտիկ խարսն ապով.

Կերթամ կասեմ իմ ախպօրս.

Գիւգեայ զարնէ քե խանջալով:

Տուտին ասաց Կումրիկ խաւքուն.

Ընչի՛ կուլաս կուց-կուց արուն.

Կեօ նոր իրե բարի դարուն.

Քե առնեմ վեր իմ նղօուն Թեքուն,

Տանեմ, դնեմ, մէջ զօգանքտերուն.

Դուռ բանամ դէմ հարաւ քամուն.

Էրդիս բանամ դէմ աստղքերուն.

Էրդիս բանամ դէմ ծաղկներուն:

*
* *

Քըլբուլ էսաց զումրիկ խաւքուն.

— Հէր կլաս, դառնիկ էրերին:

Էսաց.— Էկաւ վերէս դառնիկ աշուն.

Ինչ տենեմ էսա ձէթիկ ճօերուն.

Յէր տը չըլամ դառնիկ յերերին:

—Վաղ կը գեայ պօծառ գեարուն,
 Քի կառնեմ, կեւեմ ...
 Կը թռնինք խըտ բանցրիկ սարիւրին.
 Բեօն կը շընինք մանչ բեօղերին.
 'Իււռ կը թողնենք խարաւ քեամուն:

*
 * *

Մօկաց բարբառով.

Յռնոսն էր բանցրիկ սարերաց.
 Քեամիմ էլաւ, իզոր շող բաժնիկ էրերաց.
 Քիւ սըրտն զօզան քիւ ծըծվեր պաղ աղբուր.
 Պաղ աղբուր բարակ առուն էն կապած.
 Մարդ չը դըտէր, կերթէր դիւր:
 Մէկ դօսք կերթէր քիւ խերանց պաղչէն,
 Ան վարդերաց բիւրւր.
 Շատ վարդ կէր ինի. ան մէկն էր քեամուր.
 Ձեռ տուը, տակմ աը կտուէր.
 Թուփ իբի յերար. չէտու դասուր.
 Տանէր, զարկեր մանչ եարօջ քնարին.
 Քնարն էր քրտընի,
 Խալ ընքէր էր, կարմիր իրես:

*
 * *

Կարձկանայ Նանկանց գիւղի բարբառով.

Եթաւքուկ վըր ծովուն՝ անուն էր արուօր,
 Վզիկն էր յէրկէն, սրտիկ սեաւոր,
 Արի, եաւ արի, խռով մի կենար,
 Ատտուորի մալ մեզի չի մնար:
 Նս խիւանդ եմ արի ձի տես,
 Տիւ քեօ անխուն Աստուած սիրես,
 Թէ մեռնելու եմ, դիւ ձի ասես,
 Թէ ապրելու եմ, դիւ դեղմ էնես:
 Բօսան եմ դրեր, վըր էն մէկ դարին,
 Աստուած աւիրէր ըստարուան տարին.
 Չխասաւ մէկ շամամ ճամբիւնք իմ եարին:

Դիւ կու քէլես եանա, եանա,
 Մարդուն ասն դռնիկ բանա,
 Օր մընջ ձի մընջ քե դիւսման ա.
 Տարիմ պօլոր խիւանդանայ:

Դիւ կու քելիս դամով - դամով
 Ընձկուս սալամ կաքաւ ուր էրամով,
 Խէրիք դիւ ընձի անես դարսով, վարամով:
 Բրանց մի կանչեմ, մէկ խայերէն,
 Մէկ մի տը կանչեմ թիւրքերէն.
 Շիլա շապիկ գեօ քիւ վերէն,
 Որ քի կարեց խմունէն.
 Աստու կրակ ուր վերէն:

Տնէն էլար կայներ իս դիւռ,
 Մէջքաթիս զարկեր ջուխտակ ինուռ.
 Ես քեօ սիրուն սաւալու ծուռ:
 Բաժդ էր բարակ ծովէն քեաշած,
 Ես քեօ սիրուն խալած, մաշած.
 Տնէն յէլար կէրթաս լէզին,
 Դիւն ու քեօ ջուխտակ տէգէրկին.
 Իմ սէր դառաւ վրը էն մէկին:

Առնօս, բանցրիկ սար, չկէր քիւ նման,
 Էրկիւ պաղ յախբուր քեօ կողէն յէլան.
 Մէկն էր խրտ բառին, մէկն էր խրտ զօղան.
 Որն օր խրնտ բառին՝ խաթիպ խաւքերաց,
 Որն օր խրնչ զօղան՝ սուսուռ մաքերաց.
 Յորեն իմ ցաներ խրտ գութնի ալան՝
 Յելե ծով տուե խրտ արեգական.
 Կաքուիկն ա՛ կերեր տուեր ձկական,
 Կեաքաւ խրուվեր ուր խէրկան, մերկան.
 Գեացեր խուովեր խրտ անօրէն,
 Նրա քրտու դին ա, նրա խայու թորէն:

Նախիր ասրան, Բիսան կորուս. աղջի նանայ
 Քերնեմ քեօ ծոց գիշեր չօր լուս, քեալաշ նանայ.
 Ջեայնամ ու գեռու քեառսուն ղուռուշ. աղջիկ նանայ.
 Վարազայ սար բուսէ բրինձ,
 Իմ սիրտ ու քեօն բունէ կռինջ.
 Վարազայ սար բացուէ կակաշ,
 Աստուած պախէր Թումաղի լաճ.
 Չուխեմ էրկէն. կապէն էր կարճ:

Կիւսնեց գիւղի բարբառով *).

Ձուրն ի պրծէ, դիւզեայ սարէն,
Գիւզեայ թափի մառմառ քեարէն.
Տնաւեր, իրար մի տու իմ սուտի եարեցն:

Արնն ի առէ, տայն ի ծովուն,
Ես քե սիրեմ աշնան խովուն:

Մառի տկի պաղ աղբուր,
Առծթէ թաս, սակէ ջուր:

Մէյ տու խմեմ, էրթամ խուր:

Էլայ տանիս, թափ քէլեցի.

Կարմիր խնձոր գլորեցի.

Լանկով զարկի, յերդիս բացի.

Եարս տուն չէր, նստայ լացի:

Սիրտդ բաղյա էր, ծծերդի եմբօ,

Արե, էրթանք ալօ վերիօ.

Նմր առնէր Աստուած իմ խոգիս:

Ծծերդի ուռ էր, ես ասի նուռ էր.

Ասի.— քեաղեմ, դըլ հալա ժուռ էր.

Թէ ժուռ, թէ խասուն, ընձի կապուլ էր:

Տիւ կայներ էս տանսի կուպէն.

Ոսկի ճտնոց սիւտակ դօռէն:

Տիւ կայներ էս դէմ ամրոցին,

Ջուլսցըմ շամամ մէջ քեօ ծոցին.

Մէյ տու դնեմ վեր իմ խոցին:

Տիւ կայներ էս Տիրամօր քեար,

Կեւես կերթաս, մանես կաքեաւ:

Եար կորողկեմ սարեր կող,

Փռռի մաքին կիցկեմ դող.

Էլի լաճ մեր տուն բանի.

Խաց դնեմ յէռջև, կուտի.

Մեր աղջիկ ճամբխէ կը խանի:

Եօթ օր սարեր կան էկայ,

Անթառան ծաղիկ քեաղիցի.

Տարայ դարկեախ ծախիցի.

Իմ նազիլի եար պախիցի:

Վարդ ի, քե չեմ սիրե,

Գեօ մայրն ի փուշ ի,

*) Երգած է Խուռօ Սարգսեան:

Անթառան ծաղիկ կը սիրեմ,
Որ խոտն անուշ ի:

* *

Ա՛յ տնաւեր, սարի սիրած՝ քեարի պիրամ.
Մէջ տեղ զարկէ պողպատ ուրազ,
Ձիկ իցկիրես եանկուն կրակ,
Ես իրիցայ քեօ դարդէն, բեաւամ սաւդէն,
Քեարի գլօխ ծարուրցայ,
Տնաւեր, ես քեօ դարձէն իրիցայ:
Իրիկուայ բէրի գետիս ի,
Դառտակ բըառդօս Թիւէս կախ ի.
Լսեր եմ եաւօջ մախ ի,
Աչքիկրս կուլայ, սրւտս ուրախ ի:
Տղան, տղա հիլ արա,
Վեր քեօ մատին գիր արա.
Իմ խէր քե աղջիկ չի տայ.
Գնա քեօ գլխու ճար արա:

* *

Կարիպ, արի էրթանք սըպ Նշան,
Քեօ պռչամ կարեմ, դնեմ քեօ ճամբխու նըշան.
Կելնեմ կիշկամ քեօ՞ւն ճաղերաց.
Իմ Կարիպի սուրաք կերեայ,
Առջնէն էր բարսայ,
Իտեն էր բարսան.
Գեթմա կարիպ, գեթմա:
Կարիպ եմ ճամբխէ իտե սարերաց,
Կարիպին մեռնեմ ուր ճամբխըներաց.
Քեամբախ Ստամբուլ, աւեր Աքեանտար,
Տարաւ իմ կարիպ չիբե մէյ խապար.
Գեթմա կարիպ, գեթմա,
Ա՛խ արի, սարեր լացուցի,
Իմ կարիպ ճամբխուց դարձուցի
Բանձրիկ սարեր, բէդ բէդ քեարեր,
Իմ կարիպ մէջ ձե ի կորուսեր:
Գեթմա կարիպ, գեթմա:

* *

Ինչ անեմ իմ խօր գեղերաց,
Ձիկ չիտուր սինամ խաւքերաց,
Իտուր բիւլ կվերաց.
Տարաւ նստեցուց կալամ կեաղերաց:

Զխոուր սինամ խաւքերաց,
 Որ առնէր վեր ուր թեքերաց.
 Տաներ դնէր վեր ծառի ճղքերաց,
 Տանէր դնէր բանձրիկ սարերաց:
 Դիւռ եմ բացէ խարաւ քամուն,
 Իմ իդարէն վեր Աստործուն:
 Յանցի ցորեն, քեղեցի բռիկ,
 Սիրեցի Սինամ, թորկեցի Կռիկ:
 Քեօ տկէն գիւկէր ջուխսմ պաղ աղբուր,
 Մէյ տեղ զօգան, մէյ տեղ բառն,
 Էն բառի տեխաց բուր մաքերաց,
 Էն զօգան տեխաց կարիպ խաւքերաց:
 Էստ խինէն ալ խինայ չէր,
 Խինայ գեացող իմ ասած չէր.
 Էրթանք դէնայ. կառնեմ խինայ,
 Դնեմ ձեռքեր թո կարմրնայ:
 Արև արևմտոց, գրող մտնէր սապիպի ծոց,
 Որ ձիկ չանէր սիրած եարէն,
 Աստուած առնի սեպիպի բալէն:
 Եարն էր դարձէ ուր կբարէն,
 Վրէն թալը կնտի եարէն:
 Էրկու խօրօտ չինարի ծառ ի,
 Մաղքերդ բարակ խունար ի.
 Տիւն էլ չլնէր՝ մէկ էլ կը ճարի:
 Քեարուան էկաւ քեար իբե,
 Էրկու խօրօտ եար իբե.
 Մէյն ի Ֆալաֆ զարկն տարե,
 Մէկի ձեռն եմ շիւարե:
 Ճղորի մազէ լարան,
 Բրուն տարան ձի չտարան.
 Հանօր հանանօր,
 Ես մեռնեմ խաքուն տիրամօր:

*
 * *

Բանձրիկ սարեր կոճա ի.
 Մէջի մարդեր բոշայ ի.
 Ձեռաց կթխէն ռուսայ ի.
 Որ ձի չասեն բոշայ ի:
 Վայ սարեր, բանձրիկ սարեր:
 Սրե էրթանք սարեր սեյրան,

Սարից պէրին ջուխսմ ջէյրան,
 Կարմիր իրես պուճուր բերան,
 Գեօ տարողի տնիկ վերան:
 Եթմ տղա, օտար աղճիկ,
 Արե ձիկ առ, ըլնենք տուն տեղ.
 Մե խօր աշխար զատա տեղ:

*
* *

Տիրամօր գիւղի բարբառով *).

— Դու չայո՛վ աղջիկ, Շայպազի Թոռ,
 Զծմէն դիւս արե՛, քեօ ծամեր տըսնամ:
 — Է՞ծօ շան տղայ, շան որդի,
 Սըլուոր չը՛ս իդե, ճոպան չը՛ս տիսե՛:
 — Դու չայո՛վ աղջիկ, Շայպազի Թոռ,
 Զծմէն դիւս արե՛, քեօ աչքեր տըսնամ:
 — Է՞ծօ շան տղայ, շան որդի,
 Շուկան չը՛ս գացե, կթխայ չը՛ս տիսե՛:
 — Դու չայո՛վ աղջիկ, Շայպազի Թոռ,
 Զծմէն դիւս արե՛, քեօ բերան տըսնամ:
 — Է՞ծօ շան տղայ, շան որդի,
 Շուկէն չը՛ս գացե, մատնոց չը՛ս տիսե՛:
 — Դու չայո՛վ աղջիկ, Շայպազի Թոռ,
 Զծմէն դիւս արե՛, քեօ ճակատ տըսնամ:
 — Է՞ծօ շան տղայ, շան որդի,
 Շուկէն չը՛ս մտե, մէյսան չը՛ս տիսե՛:
 — Դու չայո՛վ աղջիկ, Շայպազի Թոռ,
 Զծմէն դիւս արե՛, քեօ իրես տըսնամ:
 — Է՞ծօ շան տղայ, շան որդի,
 Բաղջէն չը՛ս գացե, խնձոր չը՛ս տիսե՛:
 — Դու չայո՛վ աղջիկ, Շայպազի Թոռ,
 Զծմէն դիւս արե՛, քեօ բաժ տըսնամ:
 — Է՞ծօ շան տղայ, շան որդի,
 Յէգին չը՛ս գացե, չիմար չը՛ս տիսե՛:
 — Դու չայո՛վ աղջիկ, Շայպազի Թոռ,
 Զծմէն դիւս արե՛, քեօ օթեր տըսնամ:
 — Է՞ծօ շան տղայ, շան որդի,
 Բոստան չը՛ս գացե, շամամ չը՛ս տիսե՛:
 Տօ շան տղայ, շան որդի,

*) Ասած է Շողան Մարտիրոսեան.

Հօրս պատէն շիւռ մի գեայ,
 Հէրս քե աղջիկ չի տայ,
 Քեօ վիզ կը կտուի, քեօ արուն կը հմի,
 Քեօ կաշին քիւրք կանի, կը խաքնի:
 — Դու եայո՛վ աղջիկ, Շայպագի թու,
 Քե ես եմ սիրե, ես կառնեմ,
 Քեօ մօր վիզ կը կտուեմ, քեօ խօր վիզ կը կտուեմ,
 Իմ մուրագին կը խասնեմ:

* *

Վարդիվրայ լուս կիրակին՝
 Եարեր ջոյուան, գացին յէգին,
 Իմ աչք ընկաւ մօրէ մէկին,
 Մարե, ինձ որ չտաս մօրէ մէկին,
 Ես կերթամ խրո խօրօտկին,
 Եաման մարե, Վարդիվրայ չօք կիրակին,
 Եարեր ջոյուած գնացէն յէգին,
 Իմ աչք ընկաւ Կազարին,
 Որ չիտաս ձիկ Կազարին,
 Փախնիմ կէրթամ խինգ խազարին:

* *

Արեն առեց կամար, կամար,
 Քեօ մէջք կապիր ոսկի քեամար,
 Արեն առեց կամար կամար,
 Քե սիրեցի ջանիս խամար:
 Լուսնակ գիշեր հովն անուշ,
 Ես իմ սիրած կառնեմ, պազն անուշ:

* *

Վաճայ բարբառով

Քեան, սե, սեաւոր աղջիկ.
 Քե կուտամ Վանայ խօճին:
 — Քեան, սե, սեաւոր մարէ.
 Յորի՞ եմ տուն դու կաւիրես,
 Եմ կարիճ եմ ձեռնէն կը խլես,
 — Քեան, սե, սեաւոր աղջիկ,
 Քե կուտամ Վանայ խօճին,
 Երկէն ճուպին.
 Սահաք փոսքկին.
 — Քեան, սե, սեաւոր մարէ,
 Յորի՞ եմ տուն կաւիրես.

Խազար Վանայ խօճէն,
 Կուրպան կանեմ եմ Սախոյին.
 Թուխ կօտրկին.
 Զուռ ֆեազախին.
 Սըւտակ քեօլոզին.
 Բեօզ բեղերաց,
 Թուխ աչքերաց.
 Սիւսլի չփախին,
 Վաւրգ կքերաց,
 Բույամ ծամերաց,
 Արպըմէ փօշուն,

Կարմիր թշին,
 Թուխ ընքուկրաց,
 Ղոււմաօ բաժին,
 Նարափէտին.
 Որ առաւտուն
 Կան գալ կէրթէր,
 Ուր օխշըրին
 Արօտ կուտէր,
 Էլմ հեվարին.
 Հօ, հօ, անեւ.
 Դառնէր տուն գէր.
 Ուր սագէ տին
 Սրտին գրկէր:

—

Պու կը քելես, ճամբալդ փուշ ի,
 Շապիկդ մաշի, կապիդ նաղարա.
 Կարմիր իրես՝ պաք քի խամա.
 Դիւ կը քելես փելի Ֆանգոլ,
 Քո թեքերն ի բաղի բանդոլ,
 Քի կը պախիւմ շաքար կանդոլ.
 Հետ արեւ եղնիկ, հետ արեւ,
 Դարդ չունեմ, դարդին տէր արեւ.
 Դու կը քելես ծովի ափան,
 Քեօ սիրուն խաւքեր թափան.
 Նուռ կը ճամբխի, ես ինչ անեմ,
 Քեօ շորորած գեալ ինչ անեմ,
 Հետ արեւ եղնիկ, հետ արեւ,
 Դարդ չունեմ, դարդին տէր արեւ:

* *
 *

Կարձկանայ Նանկանց գիւղի բարբառով *)

Գեամին քեաշեր դէմ Շուխուրայ,
 Օվան բարձեր բեռմ խինայ.
 Օվան գեացեր՝ խարսնիս կու ձէնայ,
 — Զուապ տարէք խէրկան, մէրկան,
 Իմ հեանլուն առնին, թըլա տուն յիգան.
 Օրօրա, գեամին, օրօրա,
 Լօսկէն ինե կ'օրօրայ:
 Արեն առեր գեամու մառան,
 Ղաբիպ խաւքեր սիրու թափան.
 Արչկու լեռ առան տարան,
 Շօրօրա, գեամին, շօրօրա,
 Լօսկէն ի մէջ կ'օրօրայ:
 Արչակ տարան մըջ խաշերաց,
 Սալաթ կայներ՝ վըր քարերաց,
 Պուտ պուտ արուն թուխ աչքերաց.
 Օրօրա, գեամին, օրօրա,
 Լօսկէն ինե կ'օրօրայ:

* *
 *

Զուլօն կայներ մըջ գեառներուն,
 Իրես կարմիր՝ Աղբրանց արուն.

*) Ասած է Արմաղան Մարտիրոսեան:

Կաթ կըթէր վեր ծըծերուն,
 Խանձ, Կանձ, Կանձ, Զուլօ,
 Սենը գետղմ Կանղըմ Զուլօ:
 Ապապրեմ խայլի պիրես.
 Թէ չը պիրես, ձի չը վէյելես.
 Խանար, Կանար, վապիլիւր Զուլօ, վապիլիւր,
 Քեօ տանօղի տուն աւիրէր.
 Շէկ ծամեր տախտն կաւիլէր:
 Զուրն ա էլեր լուլայ, լուլայ,
 Զուլոյ օտքեր բամպկի քուլայ.
 Զուլոն տարան, Մուքեօն կուլայ:
 Վերե մեր տան արտ կէր Կոնջայ,
 Ներքե ձեր տան արտ կէր Կոնջայ,
 Զուլոն առնեմ՝ էրթըմ Գեանջա,
 Կեատըա թխեմ, էնեմ բեռղչայ.
 Ատուած օր տայ կլնեմ խօճայ.
 Վերե մեր տան արտ աշնցան.
 Ներքե ձեր տան արտ աշնցան.
 Էրկու պուրակ ջէյրան ընցան,
 Զուլոն մէջքեր, չճանչցան.
 Եւ Զուլօն էմ Մաստարեցի,
 Քեառսուն տարի քե սիրեցի,
 Օրիկմ քեօ ծոց չընեցի,
 Իմ չէն անուն չաւիրեցի:
 Եւ Մուքեօն եմ բըալաֆ ապով.
 Եւ չէնք կտուի դըակմա կապով.
 Եւ խեղտուայ Զուլօն ապով:

*
* *

Մոկաց Սեպ գիւղի բարբառով *)

Վերե մեր տան արտ կօրնգեան.
 Ներքե մեր տան արտ կօրնգեան.
 Զիանք ինէ կը խրխնջեան.
 Խապար աարէք Մէլքի կնկեան.
 Քեօ փումքի (լաչակ) կայթան գնտան,
 Հաւար Զուլօ, հաւար Զուլօ.
 Սանա գետղմ, Կաման Զուլօ:
 Վերե մեր տան ծառ կէր պնդուկ,

*) Ասած է կոյր Մանիշակ Մեյրոնեան:

Ներքե ձեր տան ծառ կեր պնդուկ,
 Քեալաշն իկե մօրուս կնգուկ,
 Վերե մեր տան արտ կէր շամամ,
 Ներքե մեր տան արտ կէր շամամ,
 Քեալաշն իկէ մօրուս քամամ:
 Վերե մեր տան թոփ կայ մասուր,
 Ներքե ձեր տան թոփ կայ մասուր,
 Առնեմ Զուլօն մտնեմ մտուր:
 Մե տան պնակ, ձե տան պնակ,
 Մըանջ հապամուն Զուլօն մէնակ:
 Զուլօն կըգեայ էրեւանայ,
 Քեամին իտայ ծոց կը բանայ.
 Որ խայ ի, խեռ կը զարմանայ,
 Որ թիրէք ի, խեռ կը խայանայ:

*
* *

Բաղէօի բարբառով *).

Քաղէշ կը գովեն չորս գեղ քրթանոց,
 Եւ քզի սիրեցի, դըռ դուն օրօրոց.
 Խանչեմ եաւ արե, սարեր լացընեմ,
 Շատ դարիւղ դուրպաթ ճամբսից գարձնեմ:
 Խաւկունք վըր ծովուն անուն արօր էր.
 Սրտիկ սևաւոր, դիտիկ կարմրուոր,
 Կապեմ բե չառեմ, էրթամ խըտ ինօր,
 Որ զիմ դարս գիտէր, որ գէնու գէտուր:
 Դալալ, ուստ գուգաս,—Այար՝ Խլաթայ.
 Պագիկմի տամ քե տուր ընձի զոլաթայ:
 Խաւկունկ կը քելէր խըտ ծովու ափան,
 Էն խաւիպ խաւկունք, էն ծովէն թափան:
 Զորցեր ա գեռլե, կայներ ա գեռմին,
 Խաղտեր ա սներ, մըլեմ ա քամին:
 Գիշերուան լուսին, ցերեկուան արե,
 Ընցար ու դարձար՝ չը տուիր ընձի բարե.

Ա՛յ եաւ արե,

Խաւով մի մնայ.

Դունիեմ աստուոր,

Ինձ քե չի մնայ:

Բաղչեմ տնկեցի խասուցի բեամամ,

*) Ասած է Ալթուն Ասպածատրեան:

Յըաւ օր ջոջըցար, փոխեցիր քո ամալ:
 Յեւաբ ա յեւաբ արեւն ա դառցեր,
 Մեր խայոց ազգին մէկ Աստուած մացեր:
 Եղնկներ սատաւ, մատներ խաղերով:
 Դու կաթիր Բաղէշ, մայլեմ թաղերով:
 Փռցեր սարէն կու գեայ պաղ ջուր,
 Կուգեայ թափի մեր ժամու դուռ.
 Տէր Խաչատուրն ու պղտի բուր,
 Լանին թալեր ա ծուռ ու մուռ:
 Յակոբ աղի նխշուն յողէն,
 Նոր եմ էլեր Եաբոյ մօտէն:
 Գեյիլ սեւան գիւզալ օլուր,
 Հեշ բիրիթի տողի դայիլ:
 Թագա պաղեր թափեր խռա,
 Ես քո սիրուն ընկայ, ծռայ:
 Դու յէլեր իր, կէրթեր յէգին,
 Կը շորորէր գեառն ու մաքին.
 Կը խանիր տեսնողի խոգին:
 Դու յէլեր իր, կէրթեր կաւի.
 Սօլեբ պատիկ, յոսեհեր մաւի:
 Լողկցար, ծովից դուս էլար.
 Դէմ ամրոցին դու կայնար:
 Մեր տան էտե փուլ մի գինի.
 Ձեր տան էտե փուլ մի գինի.
 Մեր տուն ձեր տուն խանա խանա.
 Աստուած վեր մեր աղճկէն դուռ մի բանայ:
 Մեր տուն, ձեր տուն դիմաց դիմաց.
 Խերիք ընձի անես իմաց.
 Իմ էրէտի հայեմ գնաց,
 Մխօն էլ էլաւ, Օսկոն գնաց:
 Մեր տուն, ձեր տուն պատ պիտէր.
 Յիրար սիրէնք, մարդ չգիտէր:

Հուլիս սարի խովին մեռնեմ,
 Թուխ աղի բոլին մեռնեմ.
 Ըսօր խինգ օր չըմ տիսեր,
 Տեսնողի աչիչ մեռնեմ:

* *
 *

ՍԱՆՏԻ ԵՐԳ 1)

Մեկաց Սեպ գիւղի բարբառով. *)

— Էն սիլ իկե սանտի վերայ.
 Խաղար բարին բաժն ի վերայ.
 Լաճին փռի, նառե վերայ:
 Տակդ բուսի դաստէմ ուէհան.
 Չուր եփ, Խանէ, չուր եփ, Շանէ,
 Աման պիրէք, խուս խանէք:
 Դեղ ու դեղընք վիրէն ցանկնք:

* *

*

Ըստ ինչ տեղ էր, ըստ ինչ դեղ էր,
 Բաղէշ քեաղաք անուշ տեղ էր,
 Կարմիր սօլեր օտաց նեղ էր,
 Բըլաւ աչքեր խոցուն դեղ էր:
 Սալչու փառի՛ն՝ ծանար ամիրէն,
 Դիւ քեօ ասկեաք բարհաւ էրա,
 Չուր ձգիրէն սափայ էրա,
 Չուր Մամուտա՛ք թալան էրա:
 Սարի սուրբ Գէորգ, դու ճար էրա,
 Անձին շիշակ մատաղ էրա:
 Հըսսամ աղէն դիւ ծիւռ իս (չիւօ ծուռ ի).
 Խաղար աշխէն կըսի ծուռ ի,
 Մըաջ իմ սրտին լալ ու դիւռ ի:
 Գեղով ըսըցին քեօ եաք իրի,
 Թաղով ըսըցին քեօ եաք իրի.
 Խաղար իրի, մեր տուն չիրի,
 Գեարնան գիշեր ձի քուն չիրի.
 Սանտիկ կէլի, կէլթայ խուով,
 Ես չեմ կէրի պախէ զոռով,
 Պազմ աիւ զիկ, գնայ բարով:
 Սանտիկ ուռ ի, ծէծող ծուռ ի,
 Սանտիկ դուգ ի, ծէծող պեռգ ի,
 Սանտիկ խօխ էր, ծէծող շիւ էր.

1) Սանտի վրայ ծաւար ծեծելու միջոցին իւրաքանչիւր տողն փոխն ի փոխ կերգեն կանայք. Խաղն որ վերջացաւ, ուրիշ խաղ մը երկրորդը կսկսի. Շատ անգամ մրցմամբ ծաղրաշարժ նախադասութիւններ ինքնաբերաբար հարց ու պատասխանի ձեւով կերգեն ու կասեն.

*) Երգած է կոյր Մանիշակ Մելրոնեան.

Սանտիկ փշատ էր, ծեծող շմշատ էր,
 Յուշիկ էրի, էմուր քէշի,
 Իմ քար էրի, քսոն փէշի,
 Տակն ի բիւսիր դրասցում ուրան,
 Տանիմ թըլիմ շահու դիւան,
 Շահու մարդիկ զքի գովան:

* *

Ջաղջի դռնով ես ընցայ.
 Անուշ խօտէն ես լցուայ.
 Ջաղջի տանիս գժուրայ էր.
 Իմ եար քեանց քոն բժորայ էր:
 Ջաղջի տանիս աշուշ էր,
 Իմ եար քեանց քոն քեալաւ էր:
 Ջաղաց կու կանի, մանի,
 Իմ անուշ քոն կը տանի,
 Իմ եար իմ ծոցէն կը խանի,
 Սարէն կը գիւմ, օկլում կանիւմ,
 Ձորէն կը գիւմ, էրան կանիւմ,
 Խօրօտ կնկեան աչքով կանիւմ,
 Պաղմ կուգիւմ, դիւ նազ կանիւմ:
 Սարերաց սուսան բիւսեր ի,
 Ձորերաց քեղեր իւր ի.
 Խարսներ էկան քրանց եղունքի,
 Իրիշկեցիմ, եարս մէջ չէր:
 Սարէն էկըն, խապար պիրըն,
 Ձորէն էկըն, խապար պիրըն.
 Իմ եար մէջէն գիւ խանըցին,
 Ձի խափըցըն, խեղէ խանըն,
 Կարիպմ ունեմ դասա գիւ ի,
 Աչքեր մոթ, լոս չկայ տեսնի.
 Իմ մարդ գացե, թաւ կը կռի,
 Մատնիք էլէր մատէն թաւի:
 Առաւօտման լուս աստղն ի էլի,
 Ես կէրթամ, դիւ մնաս բարի,
 Իրիք աւուր մէջ նստեր էմ քիւ ումուսով,
 Որ կէրթէր խըտ ինօր,
 Ինչի՞ ձի խափըցիր:

* *

Սինամ խիւանդ էր, խըտ բարի լուսուն,
 Սինամ, քիւ սրտի կօճակն էր խաբիր խստուն:

Էս օր ինչ օրի, իմ սիրտ փռիր էր,
Սինամ ձի խափիր, խաւտէ խանիր էր,
Վո՛յ հաւար, վո՛յ հաւար Սինամ,
Հաւսալեւ Սինամ:
Ջեօջ գեղի ջաղջըներաց վերէն
Դարս կայ դարման չկայ:

* *

Դըս չի լուսցիր, արև առիր,
Մոկաց սարիր, բիդ—բիդ քարիր.
Էրկու պաղ աղբուր մէջ կը թալին.
Մէկ թախ զոզան ի, մէկ թախ բառին.
Անիկ ինչ թախ զոզան ի, սուսուռ մաքերուն ի.
Անիկ ինչ թախ բառին ի կարիպ խաւքերուն ի,
Սուտիկ, ինչ էնեմ խըտ քեօ հալին,
Սուտիկ, գիւ չնես բարխուսար.
Դոմ (երբեմն) կլնես շիւար, շախնսար,
Դոմ կլնես շտհու խոնգեհար.
Անձրև, անձրև վեր սարերաց,
Չգետս լցուես վեր կարիպներաց,
Կարիպներ, ես կը մեռնիմ ձեր ճամբաներաց:

* *

Լուսնակն էլեր՝ վեր մեր դռան,
Ջեպմ տը կէր վեր իմ ճռան.
—Ինչ կայ ինեւ.—Վարդ ու ռէհան,
Պուկմ կտռեմ սիրու նշան:
Ասին.—Ինչ կեղի ուր ի,
Բաղէչ քեաղաք անուշ տեղ ի.
Կարմիր սօլեր օտքերուն նեղ ի.
Ասլի լաչին գիւլխուն էղի,
Կանաչ կապէն վերէն էղի.
Մեր թիւին օժդաքարին,
Օժդաքարին որ տաքարուն.
Խազար բարին վեր մե թաղին.
Գար ու քուէն ներքի թաղին:

* *

—Էս օր ինչ օր ի,
—Շուրբաթ ու պաս ի.
Աղջի քեօ գլխի արծաթու թասի.
Տղա քեօ գլխի սրմայ ու ֆաս ի,
Խորած վարդապետ կասի.—Չխաս ի:

Ալլաոկեռոի Մամկանաւ գիւղի բարբառով *).

Թրիկուն ա կիրակմուտ ա,
 Եւրմ ունիմ խաւի ճուտ ա,
 Տարէք թըխ խաւերուն կուտ ուտա,
 Իմալ էնիմ, իմալ չէնիմ,
 Եւրա պղտիկ ա, չիւարեր իմ:
 Մեռնիմ քրդի, խաթնն կիսուր,
 Գու ծուռ տղին խրատ մի տուր,
 Ինչ կայ խաւի սիւտակ դոցին,
 Կերթայ սլարկի դմշու մուր:
 Ինչ էնիմ հայլի, դանակ,
 Մարդ կուզիմ, էնիմ հանաք:
 Ինչ էնիմ վիզ ու վզնոց,
 Մարդ գուզիմ պառկիմ ի ծոց:
 Մարդմ ունեմ սև ու դեղին,
 Ով տեսնի կը պատուի լեղին:
 Ձեռնէն բռնեմ տամ գրողին
 Տռնիկ էնիմ խըտ սիրողին:
 Յիրիկուն էր բէրի վախս էր,
 Բիրի քուլաք թէս կախ էր:
 Էկան ըսին եւրի մախ էր,
 Սիրտս ուրախ էր, աչքս լալ էր:

*
* *

Տօ ջաղջպան, քո տուն աւեր,
 Ջուրն ա յնկե քո ջաղջներ,
 Բէտեր տարար, մանտրեր թորկիր,
 Տօ ջաղջպան քո տուն աւեր:
 Տունմ եմ չիքէ վըր քարերուն,
 Փանջարէն բացեր եմ հարաւ քամուն:
 Իմալ էնիմ, իմալ չէնիմ,
 Դարսերս շատ ա, չիւարեր իմ:

*
* *

Խաթայ բարբառով.

Եւր մեծիկ, խէրանց բաղչէն.
 Սըռսըռէր ճակտի մաղչէն.
 Թուխ մանկան կլոր փաչեն,

*) Ասած է Նուպար Դրիգորեան:

Եւր մենդիլ, մենդիլ, մենդիլ,
 Դօս մենդիլ, մենդիլ, մենդիլ,
 Բաւ կօր բու դարբ լէ դա հաւ Ե՛կա,
 Դօս մենդիլ դարբ սէ դա հաւ Ե՛կա.
 Եւր մենդիլ, կէրթաս ...
 Բարակ մէջքիդ զարկերիւ քամար.
 Կարեցիր սրտիս ի ճար:
 Եւր մենդիլ, կերթաս յաղբուր.
 Պագ մը կուգեմ, էրկուս տուր.
 Աւրեցիր սրտիս ի դուռ.
 Բաւ կօր բու, դարբ օճա հաւ Ե՛կա,
 Եւր մենդիլ, կերթաս ի յարտ.
 Այլսարք մացեր քե մար.
 Ոսկի մասնիք մարմնի (փափուկ) մատ:
 Եւր մենդիլ, կայնար մըջ պարին.
 Բաժդ բարակ ինչ օ ծառին.
 Ես քե առնեմ օլոր տարին:
 Եւր մենդիլ, դու կերթէր մառան.
 Բաժդի բարակ ինչ օ ըռահան.
 Դու խանիր իմ գլխու ծարման:
 Եւր մենդիլ, սամարդանօր.
 Բաժդի բարակ շաքրի դանօ էր.
 Մէջքդ ի զարկիր նզռուն միգար,
 Ես քե ասի, արի ձի առ:
 ... Բալաֆ Գուրա.
 Ես կը սիրի, աշխար կասի սուր ա:

*
 * *

Շիրակայ Յաօլիայ գիւղի բարբառով *).

Յզրկու ճամբէն քեարփինջ շարած էն,
 Մարօյի ջնեգի առէջ կապած էն,
 Գլանու կտրան դասա դեբը,
 Մարօյին տարան լուսնակ գլերը:
 Ես վերէն էկայ, դու դուռը բացիր,
 Ձեռքդ ծոցդ տարար, ճիւ էրիր լացիր,
 Չանքի որ չէր առնի, ընչի՛ խափեցիր:
 Մազերիդ հուսերը դասա խալ էր,
 Ջանկները յետէդ դասով լեսի էր:

*) Ասած է Մարգարիտ Պետրոսեան.

— ԲՐԻԲԻՎ, ԲՐԻԲԻՎ, ԲՐԻԲԻՎ.

Այլ թագա կիւ, կիւ.

Արի, քեզի տեսնամ, կարօտ չմնամ.

Իսկը պէտք է ճանապարհ գնամ:

— Դուն գնա, ես կը մնամ լալով.

ԲՐԻԲԻՎ, ԲՐԻԲԻՎ, ԲՐԻԲԻՎ

Արի, էրթանք քո ման էկած արտերը.

Թող ցվրուի մեր ջիտի դարսերը.

— Սարիցը վեր էկամ, դուռը բաց արիր.

Ձեռքդ քցիր զգույն թուռդ համբուրիմ:

*
* *

ՔԱՂՀԱՆԻ ԵՐԳ *)

Խոյեցւոց բարբառով.

Քախան կանէմ նուբարով, նանայ, նանայ, նանայ.

Դօլման կէփէմ բիբարով, սոնամ նանայ, նանայ.

Թաքիւջակիս խլաւա, նանայ. ...

Դօ պէրէսէն փլաւա, սոնամ նան. ...

Թաքիւջակիս կեռ կոթա, նան. ...

Դօ պէրէսէն կորկոտա, սոնամ նան. ...

Մաթինա պամբակ ցանէմ, նան. ...

Լէյլի զան քախան կանէմ, սոնամ նան. ...

Տըսնամ թէ բէղրանք, նան. ...

Մարփաւա չարդաղ կանէմ, սոն. ...

Թէ ճաշը վատ է.—

Քախան կանէմ էդ խող ին, նանայ, նանայ, նանայ,

. . . տիրոջ խօր կողին, սոնամ նան, ...

Թէ ճաշը լաւ է.—

Քախան կանէմ էդ խողին, նանայ. ...

Ղուբբան տիրոջ խօր կողին, սոնամ ելն. ...



*) Առնուած է «Նիստ ու կաց Խոյեցւոց» Դրաշար Յարութիւն

Աւջեանի անտիպ ուսումնասիրութենէն: